ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ | № 7, 1952 | Общественные науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

# ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ Ն. Ա. ԴՈԲՐՈԼՅՈՒԲՈՎԻ ՄԱՍԻՆ

*Վ. Ս. Կրուժկովի «Ն. Ա. Դոբրոլյուբովի աշխարհայացքը» աշխատությունը, որ վերջերս արժանացավ Ստալինյան մրցանակի, արժեքավոր ավանդ է ռուս մեծ ռևոլյուցիոներ-դեմոկրատների տեսական ժառանգության գիտական հետազոտության բնագավառում. Այդ աշխատության մեջ մարքսիզմ-լենինիզմի դիրքերից գնահատված են ռուս մեծ ռևոլյուցիոներ-դեմոկրատ Դոբրոլյուբովի քաղաքական, փիլիսոփայական, սոցիոլոգիական և էսթետիկական հայացքները։*

* * *

*Ընկ. Վ. Ս. Կրուժկովը իր աշխատության «Ն. Ա. Դոբրոլյուբովի աշխարհայացքի ձևավորումը» գլխում հետևում է ռուս մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատի քաղաքական, փիլիսոփայական, սոցիոլոգիական և էսթետիկական հայացքների ձևավորման պրոցեսին։ Այդ պրոցեսի առաջին աստիճանը,—ինչպես ընդգծում է աշխատության հեղինակը,—հանդիսանում է 1847—1853 թթ. ժամանակաշրջանը, երբ Ն. Ա. Դոբրոլյուբովը սովորում էր Նիժնի-Նովգորոդի հոգևոր ուսումնարանում և հոգևոր սեմինարիայում։*

*Հենվելով հոգևոր սեմինարիայի նախկին սաների հիշողությունների, Ն. Գ. Չերնիշևսկու վկայությունների, ինչպես նաև արխիվային այլ նյութերի վրա, գրախոսվող գրքի հեղինակը ցույց է տալիս, որ պատանի Դոբրոլյուբովը իր զարգացմամբ պարտական է ոչ թե հոգևոր սեմինարիային, այլ միայն և միայն իր «սեփական, ինքնուրույն աշխատանքին»։ Նա վաղ տարիքից անչափ սիրելով ընթերցանությունը և լինելով բացառիկ մեծ ընդունակությունների տեր պատանի, 16—17 տարեկան հասակում մի քանի գլխով բարձր է եղել կանգնած ոչ միայն մյուս սեմինարիստներից, այլև սեմինարիայի շատ դասախոսներից։ Հենց միայն սեմինարիայում եղած ժամանակ նա կարդացել էր ավելի քան հազար կտոր գեղարվեստական, գիտական, փիլիսոփայական գրքեր. Չերնիշևսկին Դոբրոլյուբովի մասին գրել է. «Նա ընդամենը 25 տարեկան էր, բայց արդեն 4 տարի է, որ կանգնած էր ռուսական գրականության գլուխը,—ոչ, ոչ միայն ռուսական գրականության, այլև ռուսական մտքի ողջ զարգացման գլուխը... Ո՜հ, ինչպես էր նա քեզ սիրում, ժողովուրդ։ Քեզ չէր հասնում նրա խոսքը, բայց երբ դու կդառնաս այնպիսին, ինչպիսին նա ցանկանում էր քեզ տեսնել, դու կիմանաս, թե ինչքան շատ բան արեց քեզ համար այդ հանճարեղ պատանին, քո զավակներից լավագույնը» էջ (119)։ Կարդացած գրքերի մասին պատանի Դոբրոլյուբովի գրավոր կարծիքները ցույց են տալիս, որ նա գրական գնահատական է տվել ամենից առաջ գրականության լավագույն ու արժեքավոր երկերին։ Կարդալով Ա. Ս. Պուշկինի «Պոլտավա» ստեղծագործությունը, 14-ամյա Դոբրոլյուբովը հետևյալ կարծիքն է հայտնել. «Հրաշալի է... Պուշկինը հանճար է»։ Պուշկինի լիցեյան բանաստեղծությունների մասին նա հետևյալ նշումն է արել. «Պուշկինի մոտ, առհասարակ, նույնիսկ նրա երիտասարդ ժամանակ, գլխավոր հատկությունը ճշմարտացիությունն ու բնականությունն է»։*

*Գրախոսվող գրքի հեղինակը, մեջ բերելով այս տողերը, գրում է. «Պատանի Դոբրոլյուբովի նշումները Ա. Ս. Պուշկինի երկերի մասին ցույց են տալիս, որ արդեն սեմինարական տարիներին ապագա մեծ քննադատը գեղարվեստական գրականության բովանդակության ճշմարտացիությանն ու բնականությանը տալիս էր լուրջ նշանակություն։ Հետագայում մենք կտեսնենք, որ կյանքի գեղարվեստական արտացոլման ճշմարտացիությունը Դոբրոլյուբովը համարում էր ռեալիստական արվեստի անհրաժեշտ պայմանը» (էջ 20—21)։*

*Պատանի Դոբրոլյուբովը շատ բարձր կարծիք է հայտնել նաև Լերմոնտովի պոեզիայի, Տուրգենևի ստեղծագործությունների մասին։ Նա կարդալով Ա. Կոլցովի բանաստեղծու-*

թյունները, իր գրավոր կարծիքների մեջ վերջինիս անվանել է «իսկական ժողովրդական պոետ», ընդգծելով, որ «Նրա ոգին, Նրա տաղանդը գերազանցապես արտահայտվել են Նրա ռուսական երգերում», որոնց՝ «ռուսական այդ իսկական կերտվածքի մեջ նա անզուգական է...» Հեղինակը մեջ բերելով այս տողերը, գրում է. «Կոլցովի մասին 16-ամյա քննադատի այդ հակիրճ կարծիքի մեջ արդեն երևում է այն բանի երաշխիքը, որ ապագայի ռևոլյուցիոն-դեմոկրատ-հրապարակախոսը կհանդիսանա ռուսական գրականության մեջ ժողովրդայնության սկզբունքի կրքոտ պաշտպաններից մեկը» (էջ 23)։ Դոբրոլյուբովը կարդալով պոետ Դերժավինի բանաստեղծությունները, նշել է, որ դրանք գեղարվեստականորեն թույլ են։ 14-ամյա Դոբրոլյուբովը կարդալով Ն. Վ. Գոգոլի «Ընտիր տեղեր բարեկամների հետ ունեցած գրագրությունից» գրվածքը, խորաթափանցորեն նկատել է այդ «գրագրության» արատավոր կողմերը։

Հեղինակը իրավացիորեն նշում է, որ պատանի Դոբրոլյուբովի կարծիքների մեջ «արդեն երևում է ապագա տաղանդավոր գրաքննադատի երաշխիքը» (էջ 27)։ Բնագիտությանը, պատմությանը, փիլիսոփայությանը, քաղաքատնտեսությանը վերաբերող գրքերի մասին պատանի Դոբրոլյուբովի գրավոր կարծիքները, որոնք քաղվածաբար մեջ են բերված գրքում, բազմակողմանի գաղափար են տալիս այն մասին, թե ինչպիսի վիթխարի քանակությամբ գրքեր է կարդացել տաղանդավոր պատանին և ոչ միայն կարդացել, այլև խորը ուսումնասիրել դրանք, քննադատական վերաբերմունք ցույց տվել կարդացված նյութերի նկատմամբ, արել արժեքավոր դիտողություններ։ Գրքում 16—17-ամյա Դոբրոլյուբովի դպրոցական շարադրություններից քաղվածաբար մեջ բերված առանձին հատվածները նույնպես ուշագրավ տեղեկություններ են տալիս ապագա մեծ ռևոլյուցիոներ-դեմոկրատի մասին։ Պատանի սեմինարիստի շարադրություններում կարելի է հանդիպել շատ արժեքավոր մտքերի, որոնք վկայում են, որ նա արդեն այն ժամանակ, ստրկամտորեն չհետևելով ուղղափառ եկեղեցու դոգմաներին, հաճախ դուրս է եկել իդեալիստական դոգմատիկայի շրջանակներից և շրջահայաց ու խորապես ճշմարտացի դատողություններ արել աշխարհի մասին։ Այսպես, օրինակ, նա իր «Հոգու անմահության մասին» շարադրության մեջ, հակառակ իդեալիստական դոգմատիկայի, պնդում է, որ «Նյութական աշխարհը մենք գտնում ենք մեզնից դուրս, իսկ հոգևորը՝ մեր մեջ», «...ողջ աշխարհում ոչնչացում չկա։ Առերևույթ բնության մեջ ամեն ինչ կործանվում, անհետանում, ոչնչացվում է, իսկ իրականում ամեն ինչ միայն փոխում է իր գոյության ձևը» (էջ 32)։ «Ճանաչողության մեջ փորձի նշանակության մասին» սեմինարական շարադրության մեջ պատանի Դոբրոլյուբովը, հակառակ աստվածաբանական-սխոլաստիկական սկզբունքների, պնդում է, որ միակ ճիշտ մեթոդը բնության ճանաչողության էմպիրիկ-ինդուկտիվ մեթոդն է։ Այս կապակցությամբ գրքի հեղինակը իրավացիորեն նկատում է, որ «դա արդեն մի քայլ էր դեպի առաջ՝ Դոբրոլյուբովի փիլիսոփայական հայացքների ձևավորման մեջ» (էջ 34)։ Այնուհետև նույն այդ շարադրության մեջ հանճարեղ պատանին լուրջ տարակուսանք է հայտնում այսպես կոչված «բնածին» գաղափարների գոյության մասին, պնդում է, որ մարմինը և հոգին մի միասնություն են կազմում, հոգեկան գործողությունը դրսևորվում է արտաքնապես և հանդիսանում է արտաքին առարկաների կողմից մեր զգայարանների վրա ներգործելու արգասիք։ Պատանի Դոբրոլյուբովը գտնում է, որ մաթեմատիկական գիտելիքների ճշտությունը նույնպես ապացուցվում է փորձով, մաթեմատիկական հետազոտությունները ճիշտ են լինում միայն այն ժամանակ, երբ համապատասխանում են բնությանը։ Գրախոսվող գրքի հեղինակը այս կարգի արխիվային-ձեռագրային փաստական նյութերի խորազնին ուսումնասիրությամբ հանգել է նոր ու արժեքավոր հետևությունների։ Նա Դոբրոլյուբովի՝ վերևում նշված շարադրության տողերից անում է հետևյալ եզրակացությունը. «Դոբրոլյուբովի այդ դատողություններից հետևում է, որ արդեն այն ժամանակ նա ըստ էության մոտեցել էր մատերիալիստական տեսակետին (թեկուզ և տարրական, պրիմիտիվ ձևով), քանի որ ընդունում էր բնության երևույթների գոյությունը անկախ մարդու զգայություններից» (էջ 34)։ Հեղինակը ուշիուշով հետևում է Դոբրոլյուբովի աթեիստական հայացքների աստիճանական ձևավորմանը։ Նա ցույց է տալիս, որ Դոբրոլյուբովի մոտ կրոնի նկատմամբ տարակուսանքի առաջին սաղմերը նկատվում են դեռևս 1851 թվականին, այսինքն, երբ նա տասնհինգ տարեկան էր, հոգևոր սեմինարիայի աշակերտ։ Այդ տարակուսանքները ավելի ցայտուն կերպով դրսևորվում են Դոբրոլյուբովի պատանեկական շրջանի բանաստեղծությունների մեջ։ Այսպես, օրինակ, 16 ամյա պատանին իր «Ունայն խորհում» բանաստեղծության մեջ տեխ-

գերքի խորհրդավորությունների մասին իր նախկին ըմբռնումները համարում է «հիմար նախապաշարմունք»։ Այս բանաստեղծությունից պարզ կերպով երևում է, որ նա կորցրել է հավատը «բնության արարիչի» նկատմամբ, որը այնքան փութաջանորեն ձգտել էին պատվաստել նրա պայծառ ու խորունկ գիտակցության մեջ մանուկ հասակում։ Նրան այժմ տոգորում է բնության գաղտնիքները իմանալու, ոչ մի բանի առաջ կանգ չառնող նպատակասլաց տենչանքը։

Հեղինակը այնուհետև ցույց է տալիս, որ պատանի Դոբրոլյուբովի մոտ անվստահությունը դեպի աստվածը և կրոնական դոգմատիկան առանձնապես ուժգնորեն դրսևորվում են 1853 թվականին, որ սեմինարիայում եղած ժամանակ տաղանդավոր պատանու սկեպտիցիզմը կրոնի նկատմամբ «նրա ապագա աթեիզմի սաղմն էր միայն» (էջ 40)։ Նրա մոտ այդ սաղմը գնալով ավելի է հասունանում, զարգանում, նրա մատերիալիստական համոզմունքների զարգացմանը լիովին համապատասխան, և վերջնականապես ձևավորվում է Պետերբուրգում նրա եղած ժամանակ։ Հեղինակը ցույց է տալիս, որ Դոբրոլյուբովի առաջին ուսուցիչը եղել է ռուս հանճարեղ քննադատ, ռևոլյուցիոն-դեմոկրատ Բելինսկին. «...Ռուս հանճարեղ քննադատի հոդվածները, որոնք սեմինարիայում կարդում էր Դոբրոլյուբովը, այն առաջին սերմերն էին, որոնք ընկան սրգավանդ հողում և հետո տվեցին սքանչելի ծիլեր» (էջ 48)։

Երիտասարդ Դոբրոլյուբովի հոգևոր ձևավորման վրա բացառիկ մեծ ներգործություն է ունեցել ռուս կլասիկ գեղարվեստական գրականությունը, որը նա վաղ հասակից մեծագույն կրքոտությամբ կարդում էր, յուրացնում ու դրսևորում իր վերաբերմունքը դրա նկատմամբ։ Դոբրոլյուբովի երկրորդ ուսուցիչը ռուս մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատ Գերցենն էր, որի երկերը նա ուսումնասիրել էր սեմինարիայում։

1853 թվականին 17-ամյա Դոբրոլյուբովը ընդունվում է Պետերբուրգի գլխավոր մանկավարժական ինստիտուտը, որտեղ սովորում է մինչև 1857 թվականը։ Այս շրջանում լիովին կազմակերպվում է Դոբրոլյուբովի աշխարհայացքը, սկսվում է նրա գրաքննադատական և հրապարակախոսական արգասավոր գործունեությունը։ Դրքում բերված փաստական հարուստ նյութերը ցույց են տալիս, որ արդեն ինստիտուտում սովորելու ժամանակ լիովին ձևավորվել էին Դոբրոլյուբովի քաղաքական հայացքները, նրա ռևոլյուցիոն-դեմոկրատիզմը։ Այդ նյութերից բերենք մի օրինակ։ Երիտասարդ Դոբրոլյուբովն իր «Ջոն Նիկոլայ 1-ի մահվան առթիվ» բանաստեղծության մեջ, տոգորված պայծառ գալիքի նկատմամբ անհողդողդ հավատով, գրում է. «Հակառակ ցարերին, ռուսը կգնա դեպի ազատություն... և առանց ցարերի ժողովուրդը կլինի երջանիկ» (էջ 89)։ Հեղինակը երիտասարդ Դոբրոլյուբովի օրագրերի նյութերի, բանաստեղծությունների, ինչպես և այլ աղբյուրների վերլուծության հիման վրա ցույց է տալիս, որ Դոբրոլյուբովը ինստիտուտում «վերջնականապես հանգում է մատերիալիզմին և աթեիզմին» (էջ 95)։ Դոբրոլյուբովի վճռական շրջադարձը դեպի աթեիզմը պետք է բացատրել նրա օրավուր հասունացող ռևոլյուցիոն-դեմոկրատական հայացքների զարգացմամբ։ Հեղինակը ընդգծում է Չերնիշևսկու բացառիկ մեծ դերը Դոբրոլյուբովի աշխարհայացքի ձևավորման գործում. «Կապը և բարեկամությունը Չերնիշևսկու հետ նոր փուլ հանդիսացավ նրա աշխարհայացքի ձևավորման մեջ, էլ ավելի հարստացրեց Դոբրոլյուբովի գաղափարական հայացքները» (էջ 100)։ Հեղինակը այնուհետև հանգամանորեն կանգ է առնում «Սովրեմեննիկ» ամսագրում Դոբրոլյուբովի արգասավոր ու բազմավաստակ գործունեության բնութագրման վրա և համոզիչ կերպով ցույց է տալիս, որ մինչև «Սովրեմեննիկ»-ի մշտական աշխատակից դառնալը, Դոբրոլյուբովը արդեն հետևողական մատերիալիստ էր, բոցաշունչ ռևոլյուցիոն-դեմոկրատ և արվեստի տեսության նշանավոր տեսաբան։

Վ. Ս. Կրուժկովը Ն. Ա. Դոբրոլյուբովի աշխարհայացքի ձևավորման պրոցեսը հետազոտելիս հանգամանորեն լուսաբանում է Ռուսաստանի անցյալ դարի սոցիալ-քաղաքական հարաբերությունները և դա մեծ չափով օգնում է ընթերցողին՝ հետամուտ լինելու ապագա մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատի քաղաքական, փիլիսոփայական, էսթետիկական հայացքների ձևավորման պրոցեսին։ Նա իրավամբ հիշատակում է, որ Դոբրոլյուբովի աշխարհայացքը ձևավորվել է այն սուր դասակարգային, քաղաքական պայքարի ներգործությամբ, որ բուռն թափով ծավալվում էր անցյալ դարի 50—60 թվականներին՝ գյուղացիական հարցի շուրջը։ Եվ որքան ավելի ուժեղ էր բորբոքվում ինքնակալական-ճորտատիրական կարգերը տապալելու համար մղվող պայքարը, այնքան ավելի արագ էր տեղի ունենում Դոբրոլյուբովի աշխարհայացքի ռևոլյուցիոնականացման պրոցեսը։

Ընկ. Վ. Ս. Կրուժկովը բացահայտում է Դոբրոլյուբովի աշխարհայացքի այն շատ կարևոր ու բնորոշ առանձնահատկությունը, որ վերջինս «...չապրեց էվոլյուցիայի այն տանջալից փուլերը, որոնք վիճակվեց ապրելու Բելինսկուն՝ դեպի մատերիալիզմ և ռևոլյուցիոն դեմոկրատիզմ տանող ճանապարհին։ Նա չկրեց և այն տատանումները ռևոլյուցիոն-դեմոկրատիզմի և լիբերալիզմի միջև, որպիսին կրեց նշանավոր ռուս մտածող-ռևոլյուցիոներ Ա. Ի. Գերցենը։ Դոբրոլյուբովը ռևոլյուցիոն դեմոկրատիզմի և մատերիալիզմի դրոշը անմիջականորեն ընդունեց Բելինսկու, Գերցենի և Չերնիշևսկու ձեռքերից» (էջ 107)։

* * *

Աշխատության երկրորդ գլուխը նվիրված է Ն. Ա. Դոբրոլյուբովի քաղաքական հայացքների, նրա ռևոլյուցիոն դեմոկրատիզմի բնութագրմանը։ «...Ինչպիսի սքանչելի ասույթներ մենք կգտնեինք Դոբրոլյուբովի հոդվածներում, եթե նրա տաղանդավոր գրիչը կաշկանդված չլիներ գրաքննության շղթաներով»,—հիշատակում է հեղինակը, նախքան բուն հարցի լուսաբանությանն անցնելը (էջ 125)։

Վ. Ս. Կրուժկովը Դոբրոլյուբովի քաղաքական հայացքների կարևորագույն առանձնահատկությունը համարում է այն, որ ռուս մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատը, ի հակակշիռ ռուսական լիբերալների ռեֆորմիստական տակտիկայի, պաշտպանում էր ռևոլյուցիոն տակտիկան և հանդիսանում էր հետևողական ռևոլյուցիոներ։

Հեղինակը հանգամանորեն խոսում է լիբերալիզմի—ժողովրդի այդ քողարկված ու ոխերիմ թշնամու դեմ Դոբրոլյուբովի մղած անձնվեր պայքարի մասին։ Նա, հենվելով Վ. Ի. Լենինի այն ցուցումի վրա, որ Ռուսաստանում լիբերալիզմը դեմոկրատիայից առանձնացնելու հարցը պատկանում է ողջ ազատագրական շարժման արմատական հարցերի թվին, ընդգծում է ռուսական լիբերալիզմի դեմ Դոբրոլյուբովի և Չերնիշևսկու մղած պայքարի քաղաքական մեծ նշանակությունը։ Աշխատության կարևորագույն արժանիքն այն է, որ հեղինակին հաջողվել է բազմակողմանիորեն բացահայտել Դոբրոլյուբովի քաղաքական հայացքների խորությունը, նրա հետևողական ռևոլյուցիոն-դեմոկրատիզմի ողջ ներքին բովանդակությունը, վառ կերպով ցույց տալ այն հանճարեղ մտածող-ռևոլյուցիոների կերպարը, որի անունը Վ. Ի. Լենինի գնահատմամբ թանկ է «ամբողջ կրթված ու մտածող Ռուսաստանի համար», որը «բուռն կերպով սպասում էր ժողովրդական ապստամբությանն ընդդեմ «ներքին թյուրքերի»—ընդդեմ ինքնակալական կառավարության» (Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 5, Հայպետհրատ, էջ 426—427)։ Հեղինակը բացահայտում է Դոբրոլյուբովի այն մտքերի քաղաքական իմաստն ու նշանակությունը, որոնք նա արտահայտել է այսպես կոչված եզոպոսյան լեզվով, ցարական գրաքննության հետապնդումներից խույս տալու համար։

Հեղինակը արդարացիորեն քննադատելով Պլեխանովի, ինչպես և հետագա ուրիշ հետազոտողների կողմից Դոբրոլյուբովի աշխարհայացքի ռևոլյուցիոն-դեմոկրատական բնույթի ժխտման արմատապես սխալ տեսակետը՝ իր գրքում փաստական հարուստ նյութեր է բերում, որոնք ցույց են տալիս, որ ռուս մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատը իր հասարակական գործունեության ընթացքում եղել է ոչ թե ռեֆորմիստ, այլ իսկական ռևոլյուցիոներ, որ Դոբրոլյուբովի աշխարհայացքը ունի ոչ թե լուսավորչական, այլ հետևողական ռևոլյուցիոն բնույթ։ Դոբրոլյուբովը գյուղացիական ռևոլյուցիայի կողմնակիցն էր։ Ճիշտ է, նա, այն ժամանակվա ցարական հետամնաց պայմաններում, չէր կարող հասնել ռևոլյուցիայի մեջ պրոլետարիատի հեգեմոն դերի հիմնական գաղափարին, նա, ինչպես և մյուս ռուս մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատները, իր հայացքը ուղղում էր դեպի ռուսական առաջավոր ինտելիգենցիան և ենթադրում, որ վերջինս ի վիճակի է գլխավորելու գյուղացիների ռևոլյուցիոն շարժումը։ Հարցի նման ըմբռնումը ուտոպիական էր, բայց Ռուսաստանի այն ժամանակվա պայմաններում «...Ռուսական ինտելիգենցիայի ուշադրության դրդումը դեպի գյուղացիական հարցը և նրան կոչ անելը՝ գյուղացիության հետ մեկտեղ պայքարելու ցարիզմի դեմ, պրոգրեսիվ երևույթ էր ներկայացնում Ռուսաստանի դեմոկրատական ազատագրական շարժման պատմության մեջ» (էջ 161)։ Աշխատության մեջ քաղվածաբար բերված փաստական հարուստ նյութերը ցույց են տալիս Դոբրոլյուբովին՝ որպես կապիտալիզմի, բուրժուական կեղծ դեմոկրատիայի խորը և անաչառ քննադատի։ Ցարական Ռուսաստանի այն ժամանակվա հետամնաց պայմաններում Դոբրոլյուբովի հանճարը կարողացավ ըմբռնել կապիտալիստական հասարակակարգի, բուրժուա-

կան դեմոկրատիայի շահագործողական էությունը։ Թե ինչպես էր հանճարեղ մտածողը թափանցում հասարակական երևույթների էության մեջ, ցայտուն կերպով երևում է այն փաստից, որ նա անցյալ դարի 50-ական թվականներին ըմբռնեց, որ Ռուսաստանը անխուսափելիորեն կթևակոխի զարգացման նոր, ինքնակալական-ճորտատիրական կարգերի համեմատությամբ ավելի պրոգրեսիվ, դեմոկրատական ուղին, որը հանդիսանալու է «...միայն «առաջին կայանը» դեպի հասարակական պրոգրեսի՝ սոցիալիզմի բարձունքները տանող ճանապարհին» (էջ 250)։ Նա իր «Դեպի ռուս հասարակ ժողովրդի բնութագրման համար» և «Մոսկվայից մինչև Լայպցիգ» հոդվածներում հանճարեղ ընդհանրացում է անում այն մասին, որ Ռուսաստանում դեմոկրատական զարգացման ուղին արևմտաեվրոպական երկրների զարգացման համեմատությամբ կլինի ավելի դյուրին, ավելի կարճ և Ռուսաստանին ավելի արագ կհասցնի ցանկացած նպատակին, այսինքն ժողովրդի շահագործումը բացառող սոցիալիստական հասարակակարգին։ Կրքոտությամբ ջանալով, որպեսզի իր հայրենի երկիրը բռնի դեմոկրատական զարգացման ուղին, Դոբրոլյուբովը լրջորեն նախազգուշացնում էր, որպեսզի նա «մերժի այն ամենը, ինչ վնասակար և կործանարար էր եվրոպական պատմության մեջ»։ Խոսելով ֆեոդալիզմի համեմատությամբ Արևմտյան Եվրոպայի բուրժուական երկրներում կատարված պրոգրեսի մասին, Դոբրոլյուբովը նկատում է, որ այդ պրոգրեսը ոչ թե «ընդհանուր», այլ «մասնակի» բնույթ է կրել, այսինքն այդ երկրներում պրոգրեսը ծառայել է շահագործող դասակարգերի և ոչ թե ողջ ժողովրդի շահերին։ Ինչպես ընդգծում է ընկ. Վ. Ս. Կրուժկովը,—ռուս մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատ Դոբրոլյուբովը արդեն այն ժամանակ նկատել էր Արևմտյան Եվրոպայում տեղի ունեցած բուրժուական ռևոլյուցիաների սահմանափակ բնույթը, այն, որ այդ ռևոլյուցիաներում իշխանությունը անցել է բնակչության շահագործող փոքրամասնության, և ոչ թե ժողովրդի ձեռքը, որ այդ ռևոլյուցիաների շնորհիվ փոխվեց շահագործման ձեր միայն և ոչ թե ոչնչացվեց շահագործումը։ Հեղինակը գտնում է, որ Դոբրոլյուբովը, սկզբունքորեն մերժելով ինչպես ցարիզմը, այնպես և բուրժուական պառլամենտական ռեսպուբլիկան, կողմնակից էր այնպիսի դեմոկրատական ռեսպուբլիկայի, որտեղ մեկ ընդմիշտ ոչնչացված է մարդու շահագործումը մարդու կողմից, նյութական ողջ հարստությունը պատկանում է ամբողջ ժողովրդին, որտեղ մարդու նշանակությունը հասարակության մեջ որոշվում է նրա անձնական արժանիքներով։ Ինչ խոսք, որ Դոբրոլյուբովի քարոզած սոցիալիզմը ուտոպիական էր. գյուղացիական ռևոլյուցիան չէր կարող լինել սոցիալիստական, այն չէր կարող հաղթանակել առանց պրոլետարիատի ղեկավարության։ Բայց լիակատար ճշմարտություն է նաև այն, որ Դոբրոլյուբովի և մյուս ռուս ռևոլյուցիոն-դեմոկրատների *ռևոլյուցիոն* ուտոպիկ սոցիալիզմը, ինչպես շեշտում է ընկ. Կրուժկովը,—իր գաղափարական բովանդակությամբ անհամեմատ ավելի բարձր էր կանգնած, քան ֆրանսիական, անգլիական *ռեֆորմիստական*-ուտոպիկ սոցիալիզմը։ Ավելին, այդ ուտոպիկ սոցիալիզմը մինչև մարքսիզմի հանդես գալը Ռուսաստանում եղել է «պրոգրեսիվ ուղղություն ռուս հասարակական մտքի զարգացման մեջ» (էջ 222), որչափով, որ այն տոգորված էր ռևոլյուցիոն դեմոկրատիզմով։

* *

Վ. Ս. Կրուժկովը իր աշխատության 3-րդ գլխում տալիս է ռուս մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատ Դոբրոլյուբովի փիլիսոփայական հայացքների վերլուծությունը։ Նա ամենից առաջ ոչնչացնող քննադատության է ենթարկում այն փորձերը, որոնց նպատակն է անտեսել Ռուսաստանում հասարակական առաջավոր մտքի մեջ մատերիալիստական տրադիցիայի առկայության մասին Վ. Ի. Լենինի ցուցումը, ռուս մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատներին համարել Հեգելի և Ֆոյերբախի աշակերտներ, ժխտելով նրանց փիլիսոփայական հայացքների ինքնուրույնությունն ու ինքնատիպությունը, դրանով իսկ խարխլելով նրանց կերտած ռուս կլասիկ մատերիալիստական փիլիսոփայության հիմքերը։

Աշխատության հեղինակը համոզիչ փաստերով ցույց է տալիս, որ Դոբրոլյուբովի մատերիալիստական աշխարհայացքի ձևավորումը և զարգացումը տեղի է ունեցել՝ կապված ռուսական առաջավոր մտքի հետ։

Դոբրոլյուբովը պատմական բեմ ելավ, երբ Ռուսաստանում արդեն գոյություն ուներ լուրջ մատերիալիստական տրադիցիա։ «Նա հետևեց այդ հիանալի մատերիալիստական տրադիցիային, այն ընդունելով Լոմոնոսովից, Ռադիշչևից, Բելինսկուց, Գերցենից

և Չերնիշևսկուց, շարունակեց այդ տրադիցիան, հաստատուն կերպով և հետևողականորեն պաշտպանելով մատերիալիզմը» (էջ 265)։

Անտարակույս, Դոբրոլյուբովի մատերիալիստական աշխարհայացքի ձևավորման գործում մեծ դեր է խաղացել նաև ռուս կլասիկ գեղարվեստական ռեալիստական գրականությունը, հանձինս Պուշկինի, Նեկրասովի, Գոգոլի, Սալտիկով-Շչեդրինի և ուրիշների։

Ընկ. Կրուժկովը Դոբրոլյուբովի, ինչպես և մյուս ռուս մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատների մատերիալիստական աշխարհայացքի բնորոշ առանձնահատկությունը համարում է այն, որ այդ աշխարհայացքը «պրակտիկ», սպասարկողական բնույթ ուներ, այսինքն ծառայում էր աշխատավոր մասսաներին ինքնակալական-ճորտատիրական ճնշումից ազատագրելու գործին, որ նրա հիմքում դրված էր ռուս հանճարեղ մտածողների ռևոլյուցիոն-դեմոկրատիզմը, նրանց քաղաքական հայացքները։

Ռուս կլասիկ մատերիալիստական փիլիսոփայությունը, որ իրավամբ փիլիսոփայական մտքի զարգացման բարձրագույն աստիճանն է նախամարքսյան ժամանակաշրջանում, սկզբից մինչև վերջը եղել է ինքնուրույն, ինքնատիպ, կենսականորեն կապված լինելով մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատների քաղաքական տակտիկայի իրականացման խնդիրների հետ։

Գրախոսվող գրքի հեղինակը Դոբրոլյուբովի փիլիսոփայական հայացքների կարևոր առանձնահատկություններից մեկն է համարում այն, որ ռուս հանճարեղ մտածողը փիլիսոփայական մատերիալիզմի կոնկրետ հարցերը քննարկում էր հասարակական կյանքում նրանց ունեցած նշանակության տեսանկյունից։

Հայտնի է, որ ռուս մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատների համար փիլիսոփայական մատերիալիզմը հոգևոր զենք էր ծառայում իրականությունը ռևոլյուցիոն ճանապարհով վերափոխելու գործում։ Այստեղից և Դոբրոլյուբովի անդադրում պնդումը այն մասին, որ փիլիսոփայությունն ու գիտությունը պետք է սերտորեն կապված լինեն մեկը մյուսի հետ։ Դոբրոլյուբովի փիլիսոփայական հայացքների մեջ,—գրում է հեղինակը,— «...*ամենակարևորը և ամենաարժեքավորը... հանդիսանում է էսթետիկայի, արվեստի թեորիայի փիլիսոփայական հիմնավորումը, ճանաչողության մատերիալիստական թեորիայի հարցերի քննարկումը կապված գեղարվեստական երկերի վերլուծության հետ, այսինքն գեղարվեստական կերպարների մեջ իրականության արտացոլման պրոբլեմները*։ Հենց այդ հարցերում Դոբրոլյուբովը դրսևորում է մատերիալիստական թեորիայի խոր ըմբռնում և հմուտ գործադրում» (էջ 275)։ Դոբրոլյուբովի մոտ հանդիպում ենք մատերիալիստական տեսությունը և դիալեկտիկական մեթոդը գրականության, արվեստի հարցերի նկատմամբ կիրառելու շատ վառ օրինակների։

Ընկ. Կրուժկովը ընդգծում է, որ Դոբրոլյուբովի էսթետիկան զերծ չէր նաև սխալներից և թերություններից, որովհետև էսթետիկայի սկզբունքների միակ ճիշտ ու գիտական հիմնավորումը տրված է միայն մարքսիզմի կողմից։ Սակայն, նշում է նա, Դոբրոլյուբովի էսթետիկական հայացքները մեծ դեր են խաղացել էսթետիկայի մատերիալիստական հիմքերի մշակման ասպարեզում։ «Կարելի է վստահորեն ասել,—գրում է աշխատության հեղինակը,—որ մինչմարքսյան գրականության մեջ գիտության տվյալ բնագավառի հարցերի մասին Բելինսկուց և Չերնիշևսկուց հետո ոչ ոք չի արտահայտել այնքան խորը և արժեքավոր մտքեր, ինչքան Դոբրոլյուբովը» (էջ 345)։

* * *

Ընկ. Վ. Ս. Կրուժկովը իր աշխատության «Ն. Ա. Դոբրոլյուբովի սոցիոլոգիական հայացքները» գլխում ամենից առաջ, փաստական հարուստ նյութի հիման վրա հերքում ու մերկացնում է Ռուսաստանի ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի, մարքսիզմի նախակարապետների, այդ թվում և Դոբրոլյուբովի սոցիոլոգիական հայացքների խեղաթյուրման փորձերը, այդ հայացքների տեսական հիմքերը արևմտաեվրոպական բուրժուական սոցիոլոգիայի մեջ փնտրելու, նրանց ինքնուրույնությունը, ինքնատիպությունը ժխտելու, արևմտաեվրոպական բուրժուական և մանր բուրժուական տեսությունների նկատմամբ այդ հայացքների գերազանցությունը մթագնելու ստահոդ ու վնասակար փորձերը։

Գիտական անաչառ հետազոտությունը հեղինակին բերում է միակ ճիշտ եզրակացության, որ Դոբրոլյուբովը, ինչպես և մյուս ռուս մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատները տվել են «...իրենց ինքնուրույն պատասխանները սոցիոլոգիայի և պատմության հարցերին, ելնելով ինքնակալության և ճորտատեր ռեակցիոներների, ռուսական լիբերալիզմի

և սլավյանոֆիլականության դեմ ռուսական ռևոլյուցիոն-դեմոկրատիայի պայքարի կոնկրետ-պատմական պայմաններից» (էջ 353)։ Հանրահայտ է, որ Դոբրոլյուբովը, հասարակության պատմության հարցերում իդեալիստ լինելով հանդերձ, մի ամբողջ շարք հարցերում փորձ է արել դուրս գալ իդեալիզմի շրջանակներից և առանձին դեպքերում արտահայտել է մատերիալիստական տենդենցներ, արել է հանճարեղ կռահումներ։ Գրքի հեղինակը իրապես մեծ աշխատանք է կատարել Դոբրոլյուբովի սոցիոլոգիական հայացքներից առանձնացնելու, ամփոփելու, ընդհանրացնելու այն ողջ դրականն ու արժեքավորը, որոնց մեջ պարզ ու որոշակիորեն արտահայտվել են ռուս մեծ մտածողի մատերիալիստական տենդենցները։ Օրինակ՝ նա ընթերցողի ուշադրությունն է հրավիրում Դոբրոլյուբովի «Մահմեդի կյանքը» հոդվածում արտահայտված այն խորիմաստ ասույթների վրա, որ հասարակական պատմությունը պետք է գրվի այնպես, որ այն հանդիսանա ժողովրդի, նրա պատմական զարգացման պատմություն և ոչ թե այն վերածվի «մեծ մարդկանց կենսագրության»։ Դրախոսվող գրքի հեղինակը Դոբրոլյուբովի երկերից մեծ քանակությամբ քաղվածքներ է բերում, որոնք ցույց են տալիս, որ ռուս մեծ մտածողը հասարակության զարգացման պրոցեսում վճռական դերը հատկացրել է ժողովրդին։ Ընկ. Վ. Ս. Կրուժկովը արդարացիորեն ընդգծում է, որ հասարակության պատմության պրոցեսում ժողովրդի խաղացած վճռական դերի ընդունումը Դոբրոլյուբովի կողմից ամենագլխավորը, ամենաէականն ու ելակետայինն է պատմության ընթացքի վերաբերյալ նրա հայացքներում։ Դոբրոլյուբովը, ընդգծելով պատմական իրադարձությունների ուղղությունը որոշող ժողովրդի վճռական դերը, ամենևին չէր բացասում նաև անհատի դերը պատմության մեջ։ Ընդհակառակը, նա ընդունում էր նշանավոր պատմական գործիչների կարևոր դերը հասարակական կյանքում և ընդգծում էր, որ այդ դերը այնքան ավելի էֆեկտիվ ու արդասավոր կարող է լինել, որքան տվյալ պատմական գործչի գործունեությունը սերտորեն կապված է հասարակական կյանքի հետ, համապատասխանում է ժողովրդի կենսական շահերին։ Այս հարցում ամենից ավելի ուժեղ ու ցայտուն կերպով են դրսևորվել Դոբրոլյուբովի մատերիալիստական տենդենցները։

Ընկ. Վ. Ս. Կրուժկովը նշելով, որ պատմության մեջ ժողովրդական մասսաների և անհատի դերի հարցը Դոբրոլյուբովը «ընդհանուր առմամբ լուծել է ճիշտ» (էջ 383), միաժամանակ գրում է, որ սխալ կլիներ պնդել, թե տվյալ հարցի վերաբերյալ Դոբրոլյուբովի հայացքները «... իրենց տեսական հիմքերի մեջ անբասիր են. զուրկ ամեն տեսակի թերություններից և դրանով իսկ նույնական են պատմական մատերիալիզմի սկզբունքների հետ» (էջ 384)։

Ռուս մեծ մտածողի սոցիոլոգիական հայացքները, չնայելով իրենց դրական կողմերին, մատերիալիստական տենդենցներին, ընդհանուր առմամբ իդեալիստական են։

Դոբրոլյուբովի մոտ մատերիալիստական տենդենցները դրսևորվել են նաև հասարակական կյանքի նյութական և հոգևոր կողմերի փոխհարաբերության հարցում։

Դոբրոլյուբովն հասավ այն ճշմարտության գիտակցմանը, որ հասարակական չարիքի պատճառը պետք է փնտրել շահագործող պորտաբույծների կողմից ժողովրդին հարստահարելու, հասարակության անդամների միջև նյութական բարիքների բաշխման ոչ ճիշտ, անարդարացի սիստեմի մեջ, բայց նա չկարողացավ և չէր էլ կարող այն ժամանակվա պայմաններում գիտականորեն բացատրել այդ անարդարացի սիստեմի ծագման և հասարակության մեջ շահագործող և շահագործվող դասակարգերի գոյության արմատական պատճառները։ Դոբրոլյուբովը իր աշխատություններում մերկացնելով ամեն տեսակի ռասայական և գենեոլոգիական «տեսությունները», որոնց ջատագովները պատմական զարգացման հիմքում դնում էին ռասիստական, «գենեոլոգիական սկզբունքը», այդ ռեակցիոն տեսակետին հակադրեց հասարակության մեջ շահագործողների և շահագործվողների գոյության մասին իր ճիշտ տեսակետը։ Ընկ. Վ. Ս. Կրուժկովը հիշատակում է, որ Դոբրոլյուբովի ելույթները ընդդեմ ռասիստական-գենեոլոգիական «տեսությունների» «պ ր ո գ ր ե ս ի վ մ ե ծ ն շ ա ն ա կ ու թ յ ու ն ու ն ե ց ա ն Ռ ու ս ա ս տ ա ն ու մ ս ո ց ի ո լ ո գ ի ա կ ա ն մ տ ք ի պ ա տ մ ու թ յ ա ն մ ե ջ» (էջ 405)։ Աշխատության հեղինակը լուսաբանում է նաև Դոբրոլյուբովի էթիկական հայացքները, որոնք տոգորված էին ռևոլյուցիոն դեմոկրատիզմով։ Նա Դոբրոլյուբովի էթիկական հայացքների մեջ ողջ դրականն ու պրոգրեսիվը ցույց տալով հանդերձ շեշտում է, որ այդ հայացքները «... դեռ շատ հեռու էին էթիկայի մարքսիստական տեսությունից...» (էջ 451)։

Վ. Ս. Կրուժկովը խոշոր աշխատանք է կատարել առանձնացնելու, ընդհանրացնե-

լու պատմության հարցերի վերաբերյալ ռուս մեծ մտածողի մատերիալիստական ասույթները, այսինքն այն ամբողջ դրականն ու արժեքավորը, որը հիմք է տալիս Դոբրոլյուբովին դասելու «մինչմարքսյան ռուսական սոցիոլոգիայի նշանավոր ներկայացուցիչների շարքում» (էջ 351)։

Հեղինակը, ամփոփելով Դոբրոլյուբովի սոցիոլոգիական հայացքները, հիշատակում է, որ ճիշտ է, ռուս մեծ մտածողը չկարողացավ բարձրանալ հասարակության պատմության ամբողջական և հետևողական մատերիալիստական ըմբռնման աստիճանին, բայց չնայելով նրա պատմական հայացքների իդեալիստական կոնցեպցիային, հասարակական կյանքի շատ երևույթների մասին նրա մեկնաբանություններում կան «լուրջ մատերիալիստական տենդենցներ», որոնք «ճեղքվածք բաց արեցին իդեալիզմի մեջ» (էջ 456)։

* * *

Վ. Ս. Կրուժկովն իր աշխատության հինգերորդ գլխում բնութագրում է Դոբրոլյուբովի ռևոլյուցիոն-դեմոկրատական գրաքննադատության և էսթետիկայի հիմնական առանձնահատկությունները։ Նա ամենից առաջ քննադատության է ենթարկում Դոբրոլյուբովի էսթետիկական հայացքների վերաբերյալ եղած սխալ, հակագիտական տեսակետները։ Ամենևին չթերագնահատելով Պլեխանովի դերը ռուս մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատների գրական ժառանգության գնահատման ասպարեզում, միաժամանակ տալիս է այդ հարցում նրա թույլ տված մի շարք լուրջ սխալների խորը և բազմակողմանի վերլուծությունը։

Կրուժկովը ծավալուն քննադատության է ենթարկում Պլեխանովի այն սխալ տեսակետը, որ Դոբրոլյուբովը իբր թե կողմնակից չի եղել գեղարվեստական գրականության մեջ տենդենցիոզությանը, ցույց է տալիս գրականության տենդենցիոզության գաղափարը կենսական ճշմարտության արտացոլմանը հակադրելու, Դոբրոլյուբովի ռևոլյուցիոն-դեմոկրատական էսթետիկան «վերացական» համարելու Պլեխանովի թեզի անհիմն լինելը։ Հեղինակը սուր քննադատության է ենթարկում ռևոլյուցիոն-դեմոկրատական էսթետիկայի սկզբունքների մշակման գործում Դոբրոլյուբովի դերի նվազեցման, վերջինիս էսթետիկական հայացքների քաղաքական իմաստի անտեսման փորձերը Պլեխանովի, հետագայում նաև ուրիշ հետազոտողների կողմից։ Հեղինակը միաժամանակ անողոք քննադատության է ենթարկում Դոբրոլյուբովի էսթետիկական հայացքների տեսական արմատները ֆոյերբախյան փիլիսոփայության մեջ տեսնելու, այդ հայացքների ինքնուրույնությունը ժխտելու վնասակար կոնցեպցիան։ Այս կոնցեպցիայի կողմնակիցները, աղավաղելով Դոբրոլյուբովի էսթետիկական հայացքները, պնդում էին, որ վերջինիս էսթետիկային հատուկ է հայեցողականությունը, և ոչ թե ռևոլյուցիոն դեմոկրատիզմը, արվեստի և գրականության մեջ գաղափարազրկությունը և ոչ թե գաղափարայնության պաշտպանությունը, գրականության հասարակական դերի ժխտումը, գրականությունը հասարակական կյանքից կտրելը, գրական երկի գեղարվեստական արժանիքների թույլ ըմբռնողականությունը, գրական երկի ձևի և բովանդակության խզումը և այլն և այլն։

Գրախոսվող գրքի մեծ արժանիքներից մեկն էլ այն է, որ նրա մեջ գիտականորեն ցույց է տրված վերևում նշված կոնցեպցիայի հակագիտական ու ստահոդ բնույթը ու մարքսիզմ-լենինիզմի դիրքերից լուսաբանված են ռուս մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատի էսթետիկական հայացքները, այն մարդու, որն իր հանճարի ամբողջ ուժով ընդգծում էր գրականության կարևոր դերը հասարակական կյանքում և կրքոտությամբ պայքարում էր այդ սկզբունքը գրականության և արվեստի հիմքում դնելու համար։ «Մենք համոզված ենք,— գրում էր Դոբրոլյուբովը, — որ ժողովրդի զարգացման որոշ աստիճանի վրա գրականությունը կդառնա հասարակությունը առաջ մղող ուժերից մեկը։ Եվ մենք չենք հրաժարվում այն հույսից, որ մեզանում ևս, Ռուսաստանում գրականությունը երբևիցե այդպիսի նշանակություն կունենա» (էջ 538)։ Այդ այսպես կոչված «հետազոտողները» Դոբրոլյուբովի էսթետիկական հայացքներից խնամքով դեն էին նետում հենց այն գաղափարները, որոնք նրա էսթետիկայի հիմնական բովանդակությունը, ելակետն էին կազմում, այսինքն ռուս մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատի մտքերը գրականության և քաղաքականության, հասարակական կյանքի միջև կապի անհրաժեշտության, գեղարվեստական երկերի գաղափարայնության, արվեստն ու գրականությունը ժողովրդին ծառայեցնելու մասին։ Գրախոսվող գրքի հեղինակը այս կապակցությամբ գրում է. «Եթե սոցիալիստական տենդենցիոզ վեպը» Արևմուտքում, Էնգելսի խոսքերով արտահայտած, խախտեց

«բուրժուական աշխարհի օպտիմիզմը», տարակուսանք առաջացրեց գոյություն ունեցող կարգերի հիմքերի մշտնջենականության նկատմամբ, ապա Բելինսկու, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի հրապարակախոսությունը խախտեց Ռուսաստանի ինքնակալական-ճորտատիրական կարգերի օպտիմիզմը և տարակուսանք առաջացրեց նրա հիմքերի անխախտության նկատմամբ։ Դրա մեջ է 19-րդ դարի 40—60 թվականների ռուս ռևոլյուցիոն հրապարակախոսության նշանավոր գործիչների փայլուն պլեադայի մեծագույն ծառայությունը» (էջ 540)։

Հեղինակը հանգամանորեն կանգ է առնում Դոբրոլյուբովի ռևոլյուցիոն-դեմոկրատական գրաքննադատության, էսթետիկայի առանձնահատկությունների լուսաբանման վրա և ցույց է տալիս, որ ոչ մի ընդհանուր բան չի կարող լինել Դոբրոլյուբովի ռևոլյուցիոն-դեմոկրատական, նպատակասլաց էսթետիկայի և Ֆոյերբախի իդեալիստական էսթետիկայի միջև։

Աշխատության հեղինակը արդարացիորեն նշում է, որ Դոբրոլյուբովի էսթետիկական հայացքները խեղաթյուրողների համար ընդհանուր է այն պարզ ճշմարտության անտեսումը, որ «Դոբրոլյուբովի՝ ռուսական էսթետիկական մտքի զարգացման բնագավառում Բելինսկու գործի շարունակողի և Չերնիշևսկու մերձավորագույն զինակցի, էսթետիկական հայացքներում գլխավորը հանդիսանում է ռևոլյուցիոն դեմոկրատիզմը։ Հենց դա է, որ կազմում է Դոբրոլյուբովի էսթետիկայի, գրաքննադատության և հրապարակախոսության քաղաքական հիմքը» (541)։

Վ. Ս. Կրուժկովը Դոբրոլյուբովի գրական ժառանգության խորազնին ուսումնասիրության հիման վրա արժեքավոր ընդհանրացում է անում ռուս մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատների ռևոլյուցիոն-դեմոկրատական ռեալիզմի և բուրժուական ռեալիզմի միջև եղած էական տարբերության մասին։ Նա հիշատակում է, որ ռուս հանճարեղ մտածողներ՝ Բելինսկու, Չերնիշևսկու և Դոբրոլյուբովի ռևոլյուցիոն-դեմոկրատական ռեալիզմը, ի տարբերություն բուրժուական ռեալիզմից, իր մեջ պարունակում էր «նորի կենսահաստատման գաղափարը», «աշխատանքի շահագործման ոչնչացման գաղափարը»։ Ռուս ռևոլյուցիոն-դեմոկրատական ռեալիզմը իր մեջ ներառնում է նաև «դեմոկրատական ռոմանտիզմը, որպես ռուսական գեղարվեստական գրականության զարգացման կարևորագույն պայմաններից մեկը» (էջ 546)։

Ռուս մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատների լավագույն տրադիցիաները սոցիալիստական ռեալիզմի հիման վրա պահպանում ու զարգացնում է սովետական գրականությունը։ Աշխատության հեղինակը մեջ բերելով Մարքսի խոսքերը այն մասին, որտեղ Մարքսը Դոբրոլյուբովին՝ իբրև գրողի դասում է Լեսինգի և Դիդրոյի մակարդակին, այդ խոսքերին ավելացնում է. «... Եթե Դոբրոլյուբովը իբրև գրող-հրապարակախոս հավասար է Լեսինգին և Դիդրոյին, ապա նա նրանցից անհամեմատ ավելի բարձր է կանգնած իբրև մտածող-ռևոլյուցիոներ իր քաղաքական, սոցիոլոգիական և փիլիսոփայական հայացքներով։ Էսթետիկայի հարցերի մասին նրա հայացքները նույնպես շատ ավելի կատարյալ են իրենց բովանդակության խորությամբ, քան Լեսինգի և Դիդրոյի հայացքները» (էջ 541)։

Վ. Ս. Կրուժկովը իր աշխատության մեջ ցույց է տալիս Վ. Ի. Լենինի պայքարը ռուս ռևոլյուցիոն-դեմոկրատիայի նշանավոր ներկայացուցիչների տեսական ժառանգության, Ռուսաստանի ռևոլյուցիոն շարժման զարգացման մեջ նրանց խաղացած դերի խեղաթյուրման դեմ։

«Միայն բոլշևիկյան մամուլում, և ամենից առաջ Լենինի հոդվածներում,—գրում է ընկ. Կրուժկովը,—Դոբրոլյուբովի գրական ժառանգությունը ստացավ միակ ճիշտ գնահատականը։ Հենց այդ լենինյան գնահատականն է, որ չափանիշ է ծառայում Դոբրոլյուբովի աշխարհայացքի ընդհանուր քաղաքական բնույթը որոշելու, այն հարցը որոշելու համար, թե ում է պատկանում Դոբրոլյուբովի ժառանգությունը...» (էջ 568)։

* * *

Ցանկալի է, որպեսզի Հայպետհրատը ձեռնամուխ լինի Վ. Ս. Կրուժկովի «Ն. Ա. Դոբրոլյուբովի աշխարհայացքը» արժեքավոր աշխատության հայերեն թարգմանության ու հրատարակությանը։

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ